ԲԵՆԻԱՄԻՆԸ

խոսում է ընտանեկան պատմության մասին



Բենիամինը Բուենոս Այրեսից է (Արգենտինա):

Մենք որոշ հարցեր տվեցինք նրան ընտանեկան պատմության վերաբերյալ:

Ինչպե՞ս սկսեցիր զբաղվել ընտանեկան պատմությամբ:

Ես սկսեցի ընտանեկան պատմությամբ զբաղվել հայրիկիս հետ: Մենք անում էինք դա միասին ամեն կիրակի: Հայրս օգնեց ինձ սովորել, թե ինչպես օգտագործել FamilySearch-ը: Ես փորձում ու փորձում էի: Այժմ ես կատարում եմ ընտանեկան պատմության աշխատանքը հայրիկիս կամ զարմուհի Ժասմինայի հետ:

Ի՞նչն է ձեզ դուր գալիս ընտանեկան պատմության մեջ:

Ես սիրում եմ գտնել նոր մարդկանց և ավելացնել նրանց իմ տոհմածառի վրա: Նախ, ես գտնում եմ հին գրանցումները: Ապա փնտրում եմ իմ նախնիների անունները: Գտնում եմ նրանց ծննդյան ամսաթիվը և վայրը: Ես գտնում եմ նաև այլ վայրերը, որտեղ նրանք ապրել են:

Ի՞նչ եք իմացել ձեր նախնիների մասին:

Ես իմացա, որ նախնիներս սերում են Իտալիայից և Գերմանիայից: Իտալացի նախնիներիցս մեկն ունի եղբորս անունը: Իմ եղբոր անունն է Սանտիագո, որն իտալերեն արտասանվում է Ջա՛կոմո: Ես նաև իմացա, որ մեն ազգանունն այլ կերպ էր գրվում:

Ինչպե՞ս եք օգնում ուրիշներին զբաղվել ընտանեկան պատմությամբ:

Ես օգնում եմ տատիկիս օգտագործել FamilySearch-ը: Ես սովորեցրի նրան, թե ինչպես ավելացնել հուշեր: Նաև օգնել են նրան ավելացնել մարդկանց տոհմածառի վրա: Նրա որոշ բարեկամներ ունեին շատ անուններ: Դրանք բոլորը գրանցելու համար երկար ժամանակ պահանջվեց: Բայց ես իսկապես ուրախ էի, որ կարողացա օգնել նրան սովորել օգտագործել FamilySearch-ը, ճիշտ ինչպես հայրս օգնեց ինձ:

Ընտանեկան պատմության ի՞նչ նախագծեր եք ցանկանում անել հաջորդիվ:

Ես ցանկանում եմ տեսագրություններ պատրաստել իմ ընկերների և ընտանիքի համար՝ օգնելու նրանց սովորել, թե ինչպես օգտագործել FamilySearch-ը: Սկզբում ես սովորելու շատ բան ունեի: Ես ուզում եմ սովորեցնել ուրիշներին, որպեսզի նրանք կարողանան նույնն անել:

ԱՄՍԼԵՐԸ ԱՆԴՐԱՆԻԿ